ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, կիրակի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում ԱՄՆ-ից տ. Տիրան արքեպ. Ներսոյանը և Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Հայկ և Ալիս Գալուբճյանները:

*
* *

Հոկտեմբերի 6-ին, ուրբաթ.—Երեկոյան ժամը 19-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հոկտեմբերի 8-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

Ս. պատարագին հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 18-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում ամերիկահայ բժիշկ Կարո Կարապետյանը «Հիվանդությունների կանխարգելիչ միջոցների մասին» թեմայով դասախոսություն է կարդում հոգևոր ճեմարանի ուսանողությանը:

Դասախոսությունը լսվում է մեծ հետաքրքրությամբ: Վերջում տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը շնորհակալություն է հայտնում շահեկան դասախոսության համար:

*
* *

Հոկտեմբերի 14-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն.

Այսօր Օշականի ս. Թարգմանչաց եկեղեցում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Սկյուդարի ս. Խաչ եկեղեցու տ. Թաթուլ քհն. Մալխասյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Կ. Պոլսի հայոց ս. Վարդանանց եկեղեցու տ. Հարություն ավագ քհն. Հալաճյանը:

*
* *

Հոկտեմբերի 14-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 17-ին, Մայր տաճար է այցելում Սովետական Միությունում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների մի մեծ խումբ՝ իրենց տիկիններով, խումբ, որը Սովետական Հայաստան էր ժամանել՝ ծանոթանալու մեր երկրի նվաճումներին:

Հարգելի հյուրերին այնուհետև Վեհարանում ընդունում է և ողջունում Հայոց Հայրապետը:

Նորին Սրբության և մեծահարգ հյուրերի միջև ապա տեղի է ունենում ջերմ զրույց:

Ընդունելության ավարտին, հանուն դիվանագետների, Տաիլանդի արտակարգ և լիազոր դեսպան Յուադ Լյոտրիտը խորը շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ ջերմ ընդունելության և Նորին Սրբության ողջույնի և օրհնության սրտագին խոսքերի համար:

Վեհարանում հյուրասիրությունից հետո մեծահարգ հյուրերը վառ տպավորությամբ հրաժեշտ են առնում Հայոց Հայրապետից:

*
* *

Հոկտեմբերի 17-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով Հնդկաստան մեկնեց տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, որը շուրջ երկու շաբաթ ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը հնդկահայ հոգևորականությանը, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպության ղեկավարներին և հավատացյալ հայ ժողովրդին կտանի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

*
* *

Հոկտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում տ. Հարություն ավագ քհն. Հալաճյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառն ընդունում է Վեհարանում Կ. Պոլսից ժամանած մի խումբ ուխտավորների, որոնք բարեպաշտ երկյուղածությամբ և աջահամբույրով ստանում են Նորին Սրբության օրհնությունը:

Հանուն պոլսահայության և ուխտավորական խմբի դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետը «անխախտ հավատարմության, խորը սիրո, անխարդախ հիացման և անկեղծ որդիական երախտագիտական զգացումներուն» թարգմանն է հանդիսանում Կարպիս Ուղուրլյանը՝ Հայոց Հայրապետին ուղղած իր գեղեցիկ և սրտառուչ ուղերձով:

Հայոց Հայրապետը խորապես հուզված ու մխիթարված պոլսահայ հավատացյալ Իր զավակների որդիական այս անկեղծ ու իրավ արտահայտություններից, հետաքրքրվում է նրանց եկեղեցական-հոգևոր կյանքով, օրհնում նրանց ու տալիս հայրապետական Իր պատգամը:

Նույն օրը ս. Ծողակաթ եկեղեցում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում և «Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» բնաբանով քարոզում տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը:

*
* *

Հոկտեմբերի 26-ին, հինգշաբթի.—Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետին է այցելում մայր հայրենիքում ուխտավորաբար գտնվող Կատարյան Դանիել Հ. Անտոնը՝ վիեննական մխիթարյան և հոգևոր հովիվ Բուդապեշտի հունգարահայոց:

*
* *

Հոկտեմբերի 27-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Նույն օրը հոգևոր ճեմարանում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի միաբան տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանը մոգական լապտերով ցուցադրում է հայկական Երուսաղեմը պատկերող նկարների շարք:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ մասնակցելու համար եպիսկոպոսաց ժողովի ծիսական բարեկարգության հանձնաժողովի նիստերին:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, կիրակի.—Գիտ Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բուենոս-Այրեսի հայոց ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արշամ քհն. Պողոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ անցէ ազգս այս մինչև այս ամենայն եղիցի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 30-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ են ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և առաջնորդ տ. Բարգեն արքեպ. Ապատյանը և Լիբանանից տ. Գնել եպս. Ծերեճյանը՝ մասնակցելու համար եպիսկոպոսաց ժողովի ծիսական բարեկարգության հանձնաժողովի նիստերին: